ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

"CHILDREN'S HOME – AFTER MARIE IZMIRLIAN" STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N2

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող

«ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

05. 10.2023թ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի միջև 06.02.2023թ-ին կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/10-1-ԵԽ-8-ՄԻ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանիտարական և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրով և գնման - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ: Սակայն «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկերում չի իրականավել ապրանքի մատակարարում՝ խախտվելով պայմանագրով սահմանված վաճառողի պարտավորությունները, որի արդյունքում 20.09.2023թ-ին գնորդը միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը՝ այն համարելով լուծված 178970.45 (մեկ հարյուր յոթանասունութ հազար ինը հարյուր յոթանասուն դրամ, քառասունհինգ լումա) ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները 26.09.2023թ «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին ուղարկվել է համապատասխան ծանոցում և տրվել է 10 օրացուցային օր՝ տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 47260 /քառասունյոթ հազար երկու հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 70890 /յոթանասուն հազար ութ հարյուր ինսուն/ ՀՀ դրամը գումարները «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի 900018001553 հաշվեհամարին փոխանցելու համար, սակայն սահմանված ժամկետում «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից չի վճարվել պայմանագրի և որակավորման ապահովման գումարը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով:

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝ Տ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան ✉ 375037 Մ. Յաղուբյան 13 ☎ (010) 20-15-86, 20-65-92, maryizmirlyan.childcarecenter@mlsa.am